շարադրված և ներկայումս գործող 40-րդ կետի 5-րդ ենթակետի համեմատության արդյունքում Դատարանը պարզված է համարում, որ 11.05.2022թ. դրությամբ թույլատրվում էր բանակցություններ վարել նաև այն դեպքում, **երբ գնումն իրականացվում էր օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա,** իսկ 02.11.2022թ-ից հետո նման հիմքով բանակցությունների վարումն արգելված է՝ բացառությամբ այն դեպքերի, երբ գնման գործընթացը սկսել է մինչև 02.11.2022թ-ն և ավարտված չի եղել 13.10.2022թ. դրությամբ:

Նման պայմաններում նկատի ունենալով, որ գնման պլանավորումը գնման գործընթացի տարր է, և գնում կարող է պլանավորվել մինչև ֆինանսական միջոցների նախատեսվելը, միաժամանակ հաշվի առնելով, որ «ՇՄԱՀ-ԳՀԾՁԲ-22/78» ծածկագրով ներքին աուդիտի ծառայությունների մատուցման մրցույթը եղել է պլանավորված գնում և գնման գործընթացը սկսել է 11.05.2022թ-ին, այսինքն՝ գնման գործընթացը սկսվել է մինչև 13.10.2022թ-ն և ավարտված չի եղել 13.10.2022թ. դրությամբ՝ Դատարանը եզրահանգում է, որ պատասխանողն իրավասու էր բանակցություններ հրավիրել և վարել:

Միաժամանակ Դատարանն արձանագրում է, որ նշված բանակցությունների վարումը սահմանափակված չէ <<Գնումների մասին>> ՀՀ օրենքի 38-րդ հոդվածով, քանի որ դրանք բխել են պլանավորված գնումից:

Վերոգրյալից ելնելով՝ Դատարանը գտնում է, որ հայցն անհիմն է և ենթակա է մերժման:

Անդրադառնալով դատական ծախսերի հարցին՝ Դատարանը պարզված է համարում հետևյալը.

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 101 հոդվածի համաձայն՝ դատական ծախսերը կազմված են պետական տուրքից և գործի քննության հետ կապված այլ ծախսերից:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 109 հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դատական ծախսերը գործին մասնակցող անձանց միջև բաշխվում են բավարարված հայցապահանջների չափին համամասնորեն:

Հիմք ընդունելով վերոգրյալը և նկատի ունենալով, որ հայցվորը նախապես վճարել է պետական տուրքի գումարը, իսկ հայցը մերժվում է՝ Դատարանը գտնում է, որ պետական տուրքի հարցը պետք է համարել լուծված:

Վերոգրյալի հիման վրա և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 191-192-րդ հոդվածներով՝ Դատարանը

ՎՃՌԵՑ

<<Սմարտ Աուդիտ>> ՍՊԸ-ի հայցն ընդդեմ Արթիկի համայնքապետարանի՝ Արթիկի համայնքապետարանի կարիքների ներքին աուդիտի ծառայությունների ձեռքբերման նպատակով 06.12.2022թ. հայտարարված թիվ <<ՇՄԱՀ-ԳՀԾՁԲ-22/78>> ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 16.12.2022թ. նիստի թիվ 3 արձանագրության 3.1-րդ կետով կայացված բանակցություններ հրավիրելու և կազմակերպելու մասին որոշումն անվավեր ճանաչելու պահանջի մասին, մերժել:

Դատական ծախսերի հարցը համարել լուծված:

Վճիռը կարող է բողոքարկվել ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարան՝ հրապարակման պահից մեկամսյա ժամկետում:

ԴԱՏԱՎՈՐ **Տ.ՍՏԵՓԱՆՅԱՆ**

Ծանոթություն: Սույն վճռի դեմ վերաքննիչ բողոք չի ներկայացվել, և վճիռը մտել է օրինական ուժի մեջ _____ 2023թ.

ԴԱՏԱՎՈՐ **Տ.ՍՏԵՓԱՆՅԱՆ**